## *Կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության երաշխիքները*

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն օժտված է անձեռնմխելիությամբ, ունի անվտանգության, ֆինանսավորման և սոցիալական երաշխիքներ: Պաշտպանի գործունեությանն օրենքով չնախատեսված ցանկացած միջամտություն արգելվում է, իսկ նրան վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելը, ինչպես նաև Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելն առաջացնում են քրեական պատասխանատվություն:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով հատուկ ուշադրություն է դարձվել նաև Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքներին:

Այսպես, որևէ պետական մարմին, պաշտոնատար կամ ցանկացած այլ անձ իրավունք չունի ազատությունից զրկված անձանց նկատմամբ գործադրել ճնշումներ և սպառնալիքներ կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթներն իրականացնող Պաշտպանի ներկայացուցչի հետ հանդիպելու, զրուցելու, դիմելու և տեղեկություններ տրամադրելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվել Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

Ավելին, Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները կարող են բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ (տե՛ս Սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված Սահմանադրական օրենքն առաջին անգամ սահմանում են կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսական երաշխիքներ: Նախ, Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը: Սահմանադրական օրենքը դրա հիման վրա արդեն

ամրագրում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության հատուկ ֆինանսավորման պահանջ: Այս առումով, հատկապես կարևոր է այն, որ Սահմանադրական նոր օրենքի պահանջի շնորհիվ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից: